կանում էի, թէ ինչ առարկայի վրայ էր խօսակցութիւնը: Սուսանի մի որպէ առաջ ինձ հաղորդած տեղեկութիւնները, որքան եւ մթին, որքան եւ կցկտուր լինէին, այսոամենայնիւ, ես նրանցից դուրս բերեցի հետեւեալ եզրակացութիւնները. — մի աղջկայ, կամ մի կնոջ կեանքը վտանգի մէջ էր, նրա եւ Կարօյի մէջ կային գաղտնի կապեր. Կարօն աշխատում էր ազատել նրան. խորամանկ պառաւը ծառայում էր այս ձեռնարկութեան մէջ որպէս գործիք. աղջիկը կամ կինը գտնւում էր «ամրոցի» մէջ: Ո՞ր ամրոցում, ո՞ւմն էր պատկանում ամրոցը: — Ահա այստեղ էր գլխաւոր գաղտնիքը:

Ես երկար նայում էի կիսախելագար Սուսանի վրայ: Երբ նա իր պատմութիւնը վերջացրեց, յանկարծ մի տեսակ ձայն արձակեց, որ ճիշտ նման էր միեւնոյն բոի ձայնին, որ լսել էի քանի որպէ առաջ: Սնահաւատութիւնը կրկին տիրեց ինձ: Ես նկատեցի, մի փոքրիկ աղջիկ, խայտաճամուկ եւ ֆանտաստիկական հագուստներով, դուրս վազեց աւերակների միջից, մօտեցաւ երկու խօսակիցներին: Կարօն գրկեց եւ համբուրեց նրան: Յետոյ պառաւը փոքրիկ աղջկայ հետ անյայտացան: Այս երեւոյթը այնքան յանկարծակի կերպով կատարուեցաւ, որ ես բոլորովին ապշած մնացի: Ինձ թւում էր, թէ փոքրիկ աղջիկը այն ոգիներից մէկը պէտք է լինի, որ պառաւ կախարդը պահում էր իր հրամանի ներքոյ, ման էր ածում իր հետ եւ ծառայեցնում էր իր հմայքների մէջ: Բայց որքա՜ն գեղեցիկ էր այդ նազելի արարածը: Ես նրա դէմքը տեսայ մի սրընթաց փայլակի նման, որ իսկոյն չքացաւ, բայց թողեց իմ սրտում անջնջելի տպաւորութիւն...: Բայց Կարօն ինչո՞ւ համբուրեց նրան. ո՞վ էր նա...

Ես կարծում էի, թէ Կարօն չի թաքցնի, կասէ ինձ բոլորը, թէ ով էր այդ անծանօթ պառաւը, թէ ով էր այն փոքրիկ աղջիկը, որ յայտնուեցաւ փլատակների միջից: Ես վճռեցի մինչեւ անգամ հարցնել նրանից, բայց չհամարձակուեցայ, երբ նկատեցի նրա սարսափելի կերպով վրդովուած դէմքը: Երեւում էր, պառաւի հաղորդած տեղեկութիւնները խռովութեան մէջ էին գցել նրան:

— Այն պառաւը ցնորոա՞ծ էր, — հարցրի ես, երբ նա մօտեցաւ ինձ:

— Ոչ... միայն եթէ միւս անգամ կը պատահի քեզ հանդիպել նրան, խնդրեմ, չյիշեցնել իր անցեալը...

Յետոյ խօսքը փոխելով, ասաց նա.

— Մենք պէտք է հեռանանք այստեղից, Ֆարհատ:

— Ու՞ր, — հարցրի ես: